ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____/Ս. Դեղոյան /___ «_31_» _____~~սեպտեմբերի~~ օգոստոս __2023 թ.

Կ.Տ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի

մարզ համայնք

հ. 179 հիմնական դպրոցի IIբ դասարանի

ուսումնական հաստատության անվանումը, դասարանը

Հրանուշ Հմայակի Համբարձումյան

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

«_2023_ - _2024» ուսումնական տարի

1.ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2-րդ բ դասարանում սովորում են 28 սովորողներ:Տղաները 10-ն են, աղջիկները՝18:Աստիճանաբար ձևավորվում է աշակերտական կոլեկտիվը:Աշակերտներից մի քանիսը հաճախում են պարի,գեղագիտական կենտրոն և սպորտի:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հիմնական ուշադրությունը դարձնել աշակերտական կոլեկտիվի կազմակերպմանն ու համախմբմանը: Նպաստել աշակերտների մեջ կազմակերպչական հմտությունների զարգացմանը, դաստիարակել բարեկամության և ընկերասիրության զգացում:

Կարևորագույն խնդիրն է՝ դասարանում առաջադիմության հետագա բարձրացումը, ուսումնական աշխատանքներում փոխօգնության կազմակերպումը: Դասարանում ամեն կերպ բարձրացնել կարգապահությունը, աշակերտներին վարժեցնելը, որ պահպանեն օրվա ռեժիմը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Աշակերտների մեջ սեր առաջացնել արվեստի, երաժշտության, գրականության նկատմամբ: Այցելել թանգարաններ, մանկական պատկերասրահ, տիկնիկային թատրոն, ունկնդրել մանկական երաժշտություն:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Զարգացնել հետաքրքրություն ու ձգտում գեղարվեստական գործունեության նկատմամբ: Կազմակերպել էքսկուրսիաներ բնության գիրկ, տեսարժան վայրեր, համերգներ:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն Աշակերտների մեջ դաստիարակել հայրենասիրական զգացում, զարգացնել հետաքրքրություն մեր հայրենիքի հերոսական անցյալի նկատմամբ:

3.4.Ֆիզիկական դաստիարակություն Հետքրքրություն ու ձգտում առաջացնել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու նկատմամբ: Ապահովել աշակերտների մասնակցությունը սպորտային միջոցառումներին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտներին բացատրել մեծերի աշխատանքի նշանակությունը և օգտակարությունը: Դպրոցականների մեջ

դաստիարակել աշխատասիրություն, ազնվություն, մշակել, ինքնասպասարկման հմտություններ:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Երեխաների մեջ սեր ու հոգատար վերաբերմունք դաստիարակել բնության նկատմամբ: Ելնելով էկոլոգիական պահանջներից՝ աշակերտներին ծանոթացնել բնության վրա մարդու ունեցած ներգործումը և նպաստել բնության հարստությունների մասին նրանց գիտելիքների ընդլան-ը:

4. Դպրոց-ընտանիքի կապը Սերտ կապ հաստատել դպրոցի և ընտանիքի միջև: Այդ կապի միջոցով հաղթահարել դպրոցական և ընտանեկան միջավայրում ծագած որոշ հասկացությունները: Ծանոթանալ երեխաների ընտանեկան պայմաններին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1-ին շաբաթ	Սովորողներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին:	04.-08.09.2023	Դասվար
2-րդ շաբաթ	Պարզաբանել աշակերտական «Կանոններ»-ը :	11-15.09	
3-րդ շաբաթ	ՀՀ-ն 32 տարեկան է:	18-22.09	
4-րդ շաբաթ	ՏՀՏ-ն Մաքուր պահենք բնությունը:	25-29.09	
5-րդ շաբաթ	Բժշկական զրույց կեցվածքի և առողջության պահպանման վերաբերյալ:	02-06.10	
6-րդ շաբաթ	Անցկացնել զրույց «Էրեբունի Երևան» թեմայով:	09-13.10	
7-րդ շաբաթ	Կենդանիների պաշտպանության օրվան նվիրված զրույց:	16-20.10	
8-րդ շաբաթ	Կարդալ Գ.Գաբրիելյանի «Բանաստեղծություններ»-ը:	30.10-03.11	
9-րդ շաբաթ	Էքսկուրսիա մոտակա պուրակ	06-11.11	
10-րդ շաբաթ	Պատմվածքի ընթերցում և քննարկում	13-17.11	
11-րդ շաբաթ	Էքսկուրսիա Խնկո Ապոր գրադարան	20-24.11	
12-րդ շաբաթ	Մարմնամարզության դերը և նշանակությունը մարդու կյանքում	27.11-01.12	
13-րդ շաբաթ	ՏՀՏ_Լվացվենք և առողջ սնվենք	04-08.12	

14-րդ շաբաթ	Տեղեկություններ մեր հայրենիքի մասին	11-15.12	
15-րդ շաբաթ	Աշակերտներին նախապատրաստել Ամանորի հանդեսին	18-22.12	
16-րդ շաբաթ	Հունվարի 28-ը Հայոց բանակի կազմավորման օրն է	22-26.01	
17-րդ շաբաթ	Պատմվածքի ընթերցում և քննարկում	29.01-02.02	
18-րդ շաբաթ	Կազմակերպել էքսկուրսիա	05-09.02	
19-րդ շաբաթ	Ծանոթացնել արվեստի գործիչների կտավներին-ՏՀՏ	12-16.02	
20-րդ շաբաթ	Անաղարտ պահենք մայրենին	19-23.02	
21-րդ շաբաթ	Երաժշտության ունկնդրում	26.02-01.03	
22-րդ շաբաթ	Լսենք ու կատարենք ծնողների խորհուրդները	04-07.03	
23-րդ շաբաթ	Կազմակերպել էքսկուրսիա բնության գիրկ	18-22.03	
24-րդ շաբաթ	Այցելություն տիկնիկային թատրոն	01-05.04	
25-րդ շաբաթ	Ապրիլի 12-ը տիեզերագնացի օրն է	08-12.04	
26-րդ շաբաթ	Պատմվածքի ընթերցում և քննարկում	15-19.04	
27-րդ շաբաթ	Հիշատակի օր	22-26.04	
28-րդ շաբաթ	Մայիսի 1-ը աշխատանքի և աշխատավորների համերաշխության օրն է	29.04-03.05	
29-րդ շաբաթ	Հերոսները անմահ են	06-10.05	
30-րդ շաբաթ	Երթևեկության կանոնների մեկնաբանում	13-17.05	
31-րդ շաբաթ	Զրույց ՀՀ առաջին Հանրապետության անկախության օրվա մասին	20-23.05	
32-րդ շաբաթ	Կազմակերպել էքսկուրսիա	25.05	